Կուրիս

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 85 կմ,
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 15 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1365 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,
Գտնվում է մեղրի գետի աջ կողմում,Զանգեզուրի լեռնաշղթայի լանջին: Տաթևի վանքի նոր հարկացուցակում կոչված էր Կռավաք կամ Կուրուս: Գյուղում պահպանվել է 15-17-րդ դդ թիթեղնապատ ծածկով եկեղեցի: Գյուղից շրջակայքում կան գյուղատեղիների ավերակներ: Արևելյան կողմում կան սառնորակ աղբյուրներ, այդ թվում՝ "Կուրիս" հանքային աղբյուրը:
Տնտեսությունը
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 2013 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 664 հա, որից՝
- վարելահող՝ 39 հա, բազմամյա տնկարկ՝ 2 հա, արոտ՝ 28 հա, այլ հողատեսք՝ 596 հա
- բնակավայրերի հողեր՝ 20 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 275 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1023 հա,
- անտառային հողեր՝ 24 հա, որից անտառածածկ՝ 24 հա
- ջրային հողեր՝ 1 հա